Սիմոնեանն արժանացել է Հայաստանի Հանրապետութեան գիտութեան վաստակաւոր գործչի տիտղոսի (2014), Սանկտ-Պետերբուրգի Պետական համալսարանի պատուաւոր դոկտորի (2012), Ղազախստանի *Ղազախստանի անկախութեան 20ամեակ* (2011) եւ Թուրքմենստանի *Մահթումկուլի Ֆրագի* (2014) պետական պարգեւների, *Մովսէս Խորենացի* (2009) ու *Վաչագան Բարեպաշտ* (2016) մեդալների:

Արամ Սիմոնեանը կեանքին վաղաժամ հրաժեշտ տուեց 8 Յունիս 2022ին, Երեւանում:

ԱԼԻԿ ՂԱՐԻԲԵԱՆ (algharibyan@yahoo.com)
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ (varuzhan.poghosyan@bk.ru)

ԳԷՈՐԳ ՏԷՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ
(1951--2023)

Կեանքի 72րդ տարում իր մահկանացուն կնքեց հայ ձեռագրագիտութեան երախտաւոր, պատմագիտութեան դոկտոր Գէորգ Տէր Վարդանեանը: Միջնադարեան Հայաստանի գրաւոր-մշակութային ժառանգութեան անխոնջ ուսումնասիրողը Մաշտոցեան Մատենադարանում իր նախորդներ Լեւոն Խաչիկեանի, Ասատուր Մնացականեանի, Օննիկ Եգանեանի, Արտաշէս Մաթեւոսեանի եւ միւս արժանաւոր մատենադարանցիների գործի լիիրաւ շարունակողն էր:

Գէորգ Տէր Վարդանեանը ծնուել է 1951 Յունուարի 9ին ՀՀ Տաւուշի մարզի Բերդ համայնքի Ներքին Կարմիրաղբիւր գիւղում: 1973ին աւարտել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտի հնագիտութեան, աղբիւրագիտութեան եւ ազգագրութեան բաժինը:

1974ից մինչեւ կեանքի վերջը նա աշխատել է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի գիտահետազօտական ինստիտուտ-Մատենադարանում, 1978ից՝ աւագ գիտաշխատող եւ գլխաւոր աւանդապահ (մատենապահ), 1992ից՝ նաեւ ձեռագրագիտութեան խմբի/բաժնի ղեկավար/վարիչ: 1984ին պաշտպանել է «Ներսէս Պալիանենցի պատմագրական ժառանգութիւնը (ԺԴ դ.)» թեկնածուականը: 1995-98՝ զբաղեցրել է Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէնի պաշտօնը: 2016ին պաշտպանել է դոկտորական՝ «Հայոց պատմագրքերի գիտական բնագրերի կազմութեան խնդիրներ եւ ձեռագրական աւանդոյթներ» թեմայով:

Տէր Վարդանեանին էր վիճակուած շարունակելու Մատենադարանի հայերէն ձեռագրերի մայր ցուցակի բազմահատորեակի հրատարակութիւնը, որը, ցաւօք, չհասցրեց ամբողջական տեսնել: Նրա ստեղծած երիտասարդ ձեռագրագէտների խումբը, որը յետագայում դարձաւ Մատենադարանի առանցքային բաժիններից մէկը՝ սկզբում կոչուելով ձեռագրագիտու-

թեան եւ մայր ցուցակի, իսկ 2019ից՝ պարզապէս ձեռագրագիտութեան, Տէր Վարդանեանի խմբագրութեամբ 2012-19՝ յաջողութեամբ հրատարակեց յիշեալ մատենաշարի թուով հինգ՝ Զ-Ժ. հատորները: Իբրեւ կանոն, իւրաքանչիւր հատորի համառօտ առաջաբանում Տէր Վարդանեանը ներկայացնում է տուեալ հատորին առնչուող հանգամանքներ. նշում առաջին եւ երկրորդ նկարագրողների անուններն իրենց նկարագրած ձեռագրերի կարգային համարներին զուգահեռ, նկարագրման-խմբագրման որոշ սկզբունքներ, հատորի բովանդակային առանձնայատկութիւններ, իսկ որ հետաքրքիր է՝ 6րդ հատորի առաջաբանում այն համարում է «դարձակէտային», քանի որ «*Ե. հատորով աւարտուեց մեր գիտաշխատողների անցած սերնդի արած նկարագրութիւնների հրապարակումը եւ ներկայովս, բնականաբար, սկսւում է յաջորդ սերնդի աշխատանքի արգասիքի ներկայացումը*»[2]: Նոր սերունդը գիտնականի գլխաւորած սաներն էին՝ մեծ մասամբ նախկին ուսանողները, որոնց խմբային աշխատանքի արդիւնքում, կարելի է ասել ամէնօրեայ քննարկումների՝ իրար հետ խորհրդակցելու, ղեկավար-խմբագրի հետ համաձայնեցնելու արդիւնքում միայն վերջնական տեսք էին ստանում նկարագրութիւններն ու կեանքի կոչւում մատենաշարի արժէքաւոր հատորները: Իր կենդանութեան օրօք հրատարակուած վերջին՝ Ժ. հատորի առաջաբանում Տէր Վարդանեանը հերթական պարզաբանումն է անում առ այն, որ խմբային աշխատանքների դէպքում որեւէ անհատ պէտք է անպայման հոգայ գրքի ընդհանուր խնամքը. «*ինչպէս մեր համառօտ ցուցակի Ա-Բ. հատորները (1965, 1970) եւ Մայր ցուցակի Ա. հատորը (1984) տպագրուել են Օննիկ Եգանեանի հիմնական կամ ամբողջական պատասխանատուութեամբ, ճիշտ նոյնպէս՝ մեզ բաժին է ընկել Մայր ցուցակիս վերջին հինգ (Զ-Ժ.) հատորների խնամքի հոգսը*»[3]: Գիտութեան նուիրեալի «հոգս» ասուածն իր դէպքում սահմանափակւում էր միայն բառիս օգտագործմամբ, քանի որ ձեռագրաց մայր ցուցակի պատշաճ կազմումն ու հրատարակումն առանց չափազանցութեան Գէորգ Տէր Վարդանեանի ապրելակերպն էր դարձել:

Թերեւս վերն ասուածով էր պայմանաւորուած իր սիրելի ուսուցչի եւ Մատենադարանի երկարամեայ գլխաւոր աւանդապահ (1958-73)՝ Օննիկ Եգանեանի աշխատութիւններն ամփոփող հատորի կազմում-հրատարակումը (2014)՝ իբրեւ յարգանքի տուրք վաստակաշատ ձեռագրագէտ-աւանդապահի յիշատակին: Եգանեանի առիթով Տէր Վարդանեանը Մատենադարանի գլխաւոր աւանդապահի առաքելութիւնը համարում էր իբրեւ «*ձեռագ-*

---

[2] Գ. Տէր Վարդանեան, «Մուտք», *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ. (Հմր 1801-2100)*, խմբ.՝ Գ. Տէր Վարդանեան, Երեւան, 2012, սիւն. 5:

[3] Նոյնի՝ Մաշտոցեան Մատենադարանի Մայր ցուցակի տասներորդ հատորը - *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ. (Հմր 3001-3400)*, խմբ.՝ Գ. Տէր Վարդանեան, Երեւան, 2019, սիւն 8:

ների ամէնօրեայ խնամքը, շարժը եւ գործածութիւնն ապահովելու շատ պատասխանատու աշխատանք»[4]: Յիրաւի, նա եւս առաջնորդուեց նոյն գործելաոճով՝ ձեռագրերի մայր ցուցակը կազմելիս հետեւելով նախ Վիեննայի Մխիթարեան միաբան Յակոբոս վրդ. Տաշեանի, ապա՝ Եգանեանի մշակած եւ ընդունելի դարձած սկզբունքներին, այն է՝ նկարագրութիւններն անել յատուկ հարցակարգով՝ կցելով բազմապիսի ցանկ-ցուցիչներ ու աղիւսակներ՝ պատշաճ ընդարձակ ձեռագրացուցակներին:

Տէր Վարդանեանի գիտական հետազօտութիւնների շրջանակն ընդգրկուն, միաժամանակ որոշակի ուղղուածութիւն ունէր: Առանցքում հայ աղբիւրագիտութիւնն է՝ նիւթի գիտական նշանակութիւնն ու ուսումնասիրման-հրատարակման մեթոդաբանութիւնը. մատենագրութիւն-բնագրագիտութիւն, ձեռագրագիտութիւն, հնագրութիւն, վիմագրութիւն, գրատպութեան պատմութիւն, այսինքն՝ հայ պատմաբանասիրական մտքի ողջ ընտրանին Տէր Վարդանեանի հետաքրքրութիւնների ուղեծրում էր: Բաւական է յիշատակել նրա արժէքաւոր յօդուածներից միքանիսի խորագրերը՝ հասկանալու համար գիտնականի ուսումնասիրութիւնների յենքն ու ասելիքը: Այս շարքում յատկանշելի են «Փաւստոս Բուզանդի հրատարակութիւններն ու ձեռագրերը» (*Հայկազեան հայագիտական հանդէս, ԺԹ*:1999, էջ 9-63), «Սուդակի հայկական խաչքարի արձանագրութեան նոր վերծանութիւն» (*Պատմաբանասիրական հանդէս*, 3:1998, էջ 149-54), «Վենետիկի հայոց Ս. Խաչ եկեղեցու ընծայամատեանը» (*Էջմիածին*, ԺԱ:2013, էջ 60-83), «Ներսէս վարդապետ Ակինեանը եւ իր գիտական վաստակը» (*Հայ-վրացական յարաբերութիւններ, գ. Ե.*, խմբ.՝ Հ. Բայրամեան, Երեւան, 2019, էջ 7-25), «Լվովի հայերէն ձեռագրերը եւ Հ. Յովհաննէս վարդապետ Զօհրապեանի ցուցակը» (*Բազմավէպ*, 1-2:2022, էջ 184-210) եւ աւելի քան երկու հարիւր գիտական հրապարակումներ, հաղորդումներ ու խմբագրականներ:

Գէորգ Տէր Վարդանեանը մեծ աւանդ ունի նաեւ հայ մատենագիտական աշխատութիւնների կազմման գործում: Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հրաւէրով տարիներ շարունակ նա զբաղուել է Ս. Ղազարի (աւելի ետք նաեւ Զմմառու վանքի) մատենադարանի ձեռագրերի ուսումնասիրութեամբ ու ցուցակագրմամբ: Այս ոլորտում նշանակալի է նաեւ Ս. Էջմիածնի բազմաշխատ միաբան, մատենադարանապետ Մեսրոպ մագիստրոս արք. Տէր Մովսիսեանի կենսագործունէութեանը նուիրուած մատենագիտութեան կազմումը (1999), որի շարունակութիւնը եղաւ Մեսրոպ մագիստրոսի՝ Մայր Աթոռի *Արարատ* պարբերականից արտածուած յօդուածների ժողովածոյի հրատարակումն իբրեւ «Արարատի ժառանգութիւնը» վերտառութեամբ շարքի Է. հատոր (2010): Համանման էր յիշեալ շարքի Ժ. հատորի՝ երկու գրքով հրատարակուած *Եկեղեցական մատենագրութիւն*ը, որտեղ իր

[4] Գ. Տէր Վարդանեան, «Օննիկ Եգանեանի վաստակը», Օ. Եգանեան, *Աշխատութիւններ*, հրատ. պատ.՝ Գ. Տէր Վարդանեան, Երեւան, 2014, էջ 7:

բարեպաշտ տիկնոջ՝ Սուսաննա Նահապետեանի հետ Տէր Վարդանեանը մէկտեղել, ըստ բովանդակութեան խմբաւորել-դասակարգել է *Արարատ* պարբերականի հրատարակման յիսուներկու տարիների (1868-1919) բնագրական ժառանգութիւնը՝ պատմագրական երկերից մինչեւ վարք-վկայաբանութիւններ ու ձեռագրաց յիշատակարաններ (հտր. Ա-Բ., 2017):

Տէր Վարդանեանը նաեւ հմուտ խմբագիր ու գիտական գործի կազմակերպիչ էր: Մեծ է նրա ներդրումը տարբեր երկրներում հայ ձեռագիր գրքին նուիրուած ցուցահանդէսների կազմակերպման գործում: Դրա առհաւատչեան 2007ին Ֆրանսայում Հայաստանի տարուայ առթիւ անցկացուած ցուցահանդէսն էր, որի համար 2008ին Ֆրանսայի կառավարութեան հրամանագրով Տէր Վարդանեանը պարգեւատրուել է «Գրականութեան եւ արուեստների» շքանշանով: Յետագայ տարիներին եւս շարունակուեցին այդօրինակ ցուցահանդէսներն ինչպէս Միացեալ թագաւորութիւնում *(Օքսֆորդի համալսարանի Բոդլէյեան գրադարան, 23 Օգոստոս 2015-28 Փետրուար, 2016)*, Ռուսաստանի դաշնութիւնում *(Մոսկուա, Ռուսաստանի պատմութեան պետական թանգարան, 11 Մարտ-13 Յունիս 2016)*, այնպէս էլ՝ ԱՄՆում *(Նիւ Եորքի Մետրոպոլիտան թանգարան, 22 Սեպտեմբեր 2018-13 Յունուար 2019)*: Տէր Վարդանեանին արժանին մատուցուեց նաեւ 2022ին, երբ թանգարանների միջազգային օրուայ առիթով մշակոյթի ոլորտում ունեցած նշանակալի աւանդի, ինչպէս նաեւ երկարամեայ աշխատանքային գործունէութեան համար պարգեւատրուեց ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան ոսկէ մեդալով:

Իւրաքանչիւր գիտնականի գործունէութեան անբաժանելի մասն է նաեւ գիտելիքները գալիք սերունդներին փոխանցելու առաքելութիւնը: Տէր Վարդան-անն այդ գործում եւս արժանաւոր էր: Ձեռագրագիտութիւն, բնագրագիտութիւն, հայ գրի մշակոյթ, հայ տպագիր գրքի պատմութիւն եւ նման այլ առարկաների շրջանակներում կարդացած նրա դասախօսութիւնները ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտի տարբեր ամբիոններում, ինչպէս նաեւ՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանում, դարձել էին ուսանողների սպասուած րոպէները: Երանի թէ դրանք տեւական լինէին եւ շնորհն ունենայինք անվերջ լսելու, սերտելու մեր սիրելի ուսուցչի ու աւագ ընկերոջ խրատական ու բովանդակալից խօսքը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Գէորգ Տէր Վարդանեանը շիջեց 29 Մարտ 2023ին:

ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ars.vimagraget@gmail.com